

Биолог. журн. Армении, 1-2 (56), 2004

УДК 619:616.995:636.92.(084)

ՖԱՍԻՈԼՈԶՈՎ ԿԱՐԱԿՍԱՆ ԴԵՊԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱԳԱՐԱՐՈՒԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Յ.Զ. ՆԱՂԱՇՅԱՆ, Մ.Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, 375009, Երևան

Հայաստանի մի շարք ճագարաբուծական տնտեսություններում կատարված հետազոտությունների արդյունքում 1,5 ամսականից ավագ հասակի կենդանիների մոտ հայտնաբերվել է ֆասցիոլոզ հիվանդությունը: Հիվանդությունը հարուցում են կենդանիների օրգանիզմ թափանցած ֆասցիոլաների երիտասարդ ձևերը, որոնք ճագարների օրգանիզմում սեռահասուն չեն դառնում:

Исследованиями, проведенными в ряде кролиководческих хозяйств Армении, у животных старше 1,5 мес обнаружен фасциолез. Заболевание вызывается молодыми формами фасциол, проникшими в организм кроликов; у данного хозяина фасциолы не достигают половозрелой стадии.

During researches, carried out at several rabbit-breeding farms of the Republic, the fascioliasis was diagnosed in over 1.5 months aged animals. The disease in rabbits were caused by young forms of *Fasciola hepatica*, which infested the rabbits' organisms. The causative agent in this kind of hosts does not reach the mature stage.

Ֆասցիոլոզ - ճագար - լյարդ - թրթուր

Հայաստանում ճագարաբուծության զարգացմանը զուգընթաց մեծ տարածում են ստացել նաև ինվազիոն հիվանդությունները՝ էյմերիոզը, պասալուրոզը, պիզիֆորմային ցիստիցերկոզը, քոսային ախտերը և այլն:

Վերջին 2 տարիներին հանրապետության առանձին ճագարաբուծական տնտեսություններում 1,5 ամսական և ավելի բարձր հասակի ճագարների մոտ հաճախակի արձանագրվում է մինչև այժմ անհայտ, ոչ բնորոշ կլինիկական նշաններով արտահայտվող հիվանդություն, որից կենդանիների անկումները երբեմն հասնում են 60-70%: Մասնագետները շատ հաճախ այս անկումների պատճառ են համարում էյմերիոզը կամ վիրուսային հիվանդությունները:

Հիվանդությունը կենդանիների մոտ արտահայտվում է որովայնի ծավալի մեծացմամբ, լորձաթաղանթի դեղնությամբ, ախորժակի անկումով, աճի և զարգացման դանդաղեցման և այլ ոչ բնորոշ կլինիկական նշաններով: Անկած կենդանիներին հերծելիս հայտնաբերվում է լյարդի ծավալի մեծացում և խտաստիճանի փափկացում: Նշված կլինիկական նշանները առավել բնորոշ են էյմերիոզ հիվանդությանը, սակայն հակաէյմերիոզային դեղամիջոցների ներմուծումը ոչ միայն չէր նպաստում հիվանդության կլինիկական նշանների անհետացմանը, այլ պատճառ էր հանդիսանում դեղամիջոցի ներմուծումից հետո կենդանիների անկումների առաջացմանը:

Աշխատանքի նպատակն էր պարզել կենդանիների անկումների պատճառը

և հայտնաբերված հիվանդությունների նկատմամբ մշակել բուժկանխարգելիչ միջոցառումներ:

Նյութը և մեթոդը: Հետազոտությունները կատարել ենք 2000-2001թթ. Արարատյան դաշտավայրի, Երևանի, Կոտայքի մարզի և Սևանի ավազանի ճագարաբուծական տնտեսությունների 200 հիվանդ և 150 անկաճ կենդանիների վրա: Կենդանի վիճակում հիվանդությունը ախտորոշելիս հաշվի ենք առել համաճարակաբանական տվյալները տնտեսության աշխարհագրական դիրքը, կապը այլ տնտեսությունների հետ, պահվածքի տիպը և պայմանները, կերերի տեսականին և այն վայրերը, որտեղից դրանք ներմուծվել են, կենդանիների հասակը, սեռը, կլիմայական պայմանները և այլն: Հիվանդությունը ախտորոշել ենք նաև կլինիկական նշանների և կոլոզանքի հեղմիմբոսկոպիկ հետազոտությունների ճանապարհով [3]: Անկաճ կենդանիները ենթարկել ենք լրիվ և մասնակի հելմինթոզիակա հերծման ըստ Սկոլյաքի: Հելմինթների թրթուրների, ձվերի և ադուլտակիաների առկայության նկատմամբ հետազոտության ենք ենթարկել նաև տվյալ տնտեսության թարմ և չոր խոտը [4]:

Արդյունքներ և քննարկում: Հետազոտությունների արդյունքում պարզվեց, որ նշված բոլոր տնտեսություններում, հատկապես ծնռան ամիսներին, առավելագույնն են արտահայտվում միմչև այժմ անհայտ հիվանդության կլինիկական նշանները, որոնցից առավել ակնհայտ են որովայնի ծավալի մեծացումը, ախորժակի կտրուկ անկումը, տեսանելի լորձաթաղանթների թեթևակի դեղնությունը և հանկարծահաս մահը: Այսպիսի կլինիկական նշաններ հիմնականում հայտնաբերվում են 1,5 ամսական մատղաշների մոտ: Ավելի մեծ տարիքի ճագարների մոտ նշված ախտանիշներից պահպանվում են՝ տեսանելի լորձաթաղանթների ավելի ընդգծում դեղնությունը և մարսողության պարբերական խախտման նշանները (փորլուծ կամ կապ, որովայնի փքամք): Հատկանշանակ է, որ 1,5 ամսական ճագարների անկումները բոլոր տնտեսություններում կազմում էին 60-70%: Պահվածքի պայմանները բոլոր տնտեսություններում բավարար էին, ճագարները տարափոխիկ հիվանդությունների նկատմամբ պատվաստված էին կամ էլ կանխարգելիչ դոզաներով ստացել էին համապատասխան դեղամիջոցները: Կոլոզանքի հեղմիմբոսկոպիկ (ֆյուլլբոռնի և հաջորդական լվացումների մեթոդներով) հետազոտություններով 1,5 ամսական ճագարների կոլոզանքում թե հելմինթների, և թե նախակենդանիների ձվեր կամ սաղմնապարկեր չեն հայտնաբերվել: Հելմինթների ձվեր (պասալուրոզ) և սաղմնապարկեր (էյմերիոզ) հայտնաբերվել են ավելի մեծ հասակի ճագարների կոլոզանքում, այնպիսի քանակներով, որոնք կենդանիների մահվան պատճառ չեն կարող հանդիսանալ:

1,5 ամսական անկաճ ճագարիկներին հերծելիս մեր ուշադրությունը զրավեց լյարդի ծավալի 2-5 անգամ մեծացումը, գույնի փոփոխությունը (դեղնամոխրագույն) լյարդի պատիճի ամբողջականության խախտումները, մակերեսի և պարենքիմայի մեխանիկական վնասվածքները (մակերեսը թողնում էր ծեծած մսի տպավորություն) և նրանցում սպիտակ գույնի որդանման, ավելի ստույգ նշտարանման թրթուրների առկայությունը: Թրթուրները հեշտությամբ էին անջատվում լյարդի հյուսվածքից, ավելի խորը շերտերում թրթուրներ չհայտնաբերվեցին: Նմանատիպ թրթուրներ հայտնաբերվեցին նաև որովայնի խոռոչում և ստոծանու վրա: Կրծքավանդակում և այնտեղ տեղակայված օրգաններում թրթուրներ չհայտնաբերվեցին: Բարակ աղիքների լորձաթաղանթը կատառա-հեմոռագիկ բորբոքման վիճակում էր:

Առանձնացված թրթուրների մանրադիտակային հետազոտության ժամանակ լավ երևում էին բերանային ծծանը և մարմնի եզրային կողմերում

տեղակայված դեղնուցարանները: Հայտնաբերված թրթուրների կառուցվածքաբանական առանձնահատկությունները ուսումնասիրելու նպատակով դրանց մշակեցինք Բլաժինայի մեթոդով [1]: Հարուցիչը իր արտաքին տեսքով և ներքին կառուցվածքի որոշ մանրամասներով հիշեցնում էր ֆասցիոլոգի հարուցիչին: Մեր ուշադրությունը կանգ առավ մի հետաքրքիր փաստի վրա, այսպես՝ եթե իրենց պարտադիր տերերի (տավար, մ.ե.ա) օրգանիզմում երիտասարդ ֆասցիոլաների երկարությունը սովորաբար տատանվում է 1-2մմ սահմաններում, ապա ճագարների մոտ նրանց երկարությունը տատանվում էր 3-5մմ սահմաններում: Նշված փաստը հետագա պարզաբանումների կարիք է զգում: Հետազոտությունների արդյունքում եկանք այն եզրակացության, որ 1,5 ամսական ճագարիկների մոտ հայտնաբերված հիվանդությունը ֆասցիոլոգ է: Ախտորոշման ճշգրտության մեջ առավել համոզվելու նպատակով, փորձեցինք հետազոտության ենթարկել այն խոտը, որոնցով կերակրում էին ճագարներին: Չոր խոտում աշնանը հայտնաբերեցինք 0,3մմ տրամագիծ ունեցող դեղնա-դարչնագույն, իսկ ծնռանը՝ ավելի մուգ գույնի աղուլեսկարիաներ: Երբ բացահայտեցինք, որ խոտը բերվել էր Արարատյան դաշտավայրից և նախալեռնային գոտու գետերի առափնյա շրջանից, ապա վերջնական ախտորոշումը հաստատվեց ֆասցիոլոգ:

Այդ նույն տնտեսություններում վերը նշված կլինիկական նշաններով ավելի ավագ հասակային խմբերի ճագարների կոկոսանքի հելմինթոսկոպիկ հետազոտությամբ ֆասցիոլոգի հարուցիչի ծվեր չհայտնաբերվեցին: Մորթից հետո այդ կենդանիների լյարդում և որովայնի խոռոչում հարուցիչի թրթուրներ չհայտնաբերվեցին, սակայն լյարդի վրա առկա էին դեղնա-մոխրագույն գույնի շարակցահյուսվածքային աճի հետքերը և լյարդը այս անգամ ուներ արտահայտված դեղնա-կավագույն գունավորում:

Առավել ավագ հասակի ճագարների մոտ ֆասցիոլոգի հարուցիչի թրթուրները, հավանաբար, տիրոջ լյարդում չգտնելով իրենց համար բարենպաստ պայմաններ ոչնչանում են, չհասնելով իրենց մակաբուծման վերջնական վայրը՝ լեղածորանները և լեղապարկը:

Այսպիսով, Հայաստանի հանրապետության ճագարաբուծական տնտեսություններում բուծվող 1,5 ամսական ճագարների մոտ հայտնաբերվեցին ֆասցիոլոգի հարուցիչի երիտասարդ ձևեր, որոնք այս հասակային խմբի կենդանիների մոտ լյարդի մեխանիկական վնասման, նաև թունավոր ազդեցության հետևանքով պատճառ են հանդիսանում անկումների առաջացմանը, իսկ ավելի ավագ հասակի կենդանիների մոտ, առավել բարձր բնական դիմադրողականության պայմաններում, չգտնելով իրենց զարգացման համար լավագույն պայմանները, ոչնչանում են, սակայն տիրոջ օրգանիզմում մնում են նրանց կողմից լյարդում առաջացած մեխանիկական ազդեցության հետևանքները: Միաժամանակ կարելի է եզրակացնել, որ ճագարները հանդիսանում են ֆասցիոլոգի հարուցիչի ֆակուլտատիվ տերերը, որոնց օրգանիզմում հարուցիչները կուտակվում, բայց սեռահասուն չեն դառնում [2]:

Ֆասցիոլոգը Հայաստանի ճագարաբուծական տնտեսություններում պատկանում է տարածված, բայց լիովին չբացահայտված ճիճվային հիվանդությունների թվին: Նրանով վարակվում են 1,5 ամսականից ավելի մեծ հասակի կենդանիները: Այս հիվանդությունից կենդանիների անկումները կազմում

են 60-70%: Հիվանդության առաջացմանը նպաստում են ցածրադիր, խոնավ կամ ճահճուտ վայրերից հավաքված խոտով կերակրումը: Հիվանդության կանխարգելման նպատակով անհրաժեշտ է այդպիսի վայրերից հավաքված խոտը առնվազն 6 ամիս պահպանել չոր և լավ քամհարվող պահեստներում, մինչև ադոլեսկարիաների ոչնչացումը: Վերը նշված կլինիկական նշանները ճագարների մոտ հայտնաբերելիս դրանց անհրաժեշտ է անմիջապես ենթարկել պրեիմագինալ ճիճվաթափության: Հիվանդության կանխարգելման և արդյունավետ բուժման ուղղությամբ հետազոտությունները շարունակվում են:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Практикум по диагностике инвазионных болезней сельскохозяйственных животных. М., “Колос”, 127-130, 1984.
2. Практикум по диагностике инвазионных болезней сельскохозяйственных животных. М., “Колос”, 140-141, 1984.
3. Шульц Р.С., Гвоздев Е.В. Основы общей гельминтологии. I, М., “Наука”, 108-111, 1970.
4. Якубовский М.В., Карасев Н.Ф. Паразитарные болезни животных. Минск, “УРАЖДАЙ”, 35-36, 1991.

Ստացվել է 28.II.2003